
**ԿՈՄՄԱԳԵՆԵԻ ԴՐԱՄՆԵՐՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԻ
ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ**

ԴՈՒՄԻԿՅԱՆ Ա. Վ.

Հայ դրամագիտության պատմության մեջ իրենց որոշակի տեղն ունեն համազգեների Երվանդյան թագավորների դրամները, որոնք XIX դարից դրամագետների ուշադրության կենտրոնում են: Դրանց ժամանակագրության և պատկերագրության առաջին ուսումնասիրողներից էին ֆրանսացի հայագետ Վ. Լանգլուան (1829-1869) և դրամագետ ու հնագետ Է. Բաբելոնը (1854-1924), որոնք իրենց հետազոտություններում անդրադարձան հայկական տիարայի կամ թագի խնդրին:

Համաձայն Վ. Լանգլուայի, Կոմագենեում Սամոսից¹ հետո հայկական արքայատոհմը չի թագավորել². չնայած այստեղի միապետները իրենց դրամների վրա պատկերված են հայկական թագով, սակայն իզական գծով սերում էին Սելևկյաններից: Իսկ այն, որ նրանք կրում էին տիարա, պարզապես իրենց նախորդած արքաներին նմանակելու, ինչպես նաև Կոմագենեում մեծամասնություն կազմող հայ բնակչությանը սիրաշահելու միջոց էր³: Այդուամենայնիվ, ֆրանսիացի հետազոտողը Սամոսատի,

¹ Վ. Լանգլուայի շարադրանքը վերաբերում է մ.թ.ա. 130 թ. գահակալած Սամոս II Դիկայոս Թեոսերիսին, որն «իր նստավայրն էր դարձրել Սամոսատը» (Langlois V. Numismatique de l'Arménie dans l'antiquité, Paris, 1859, pp. 8-9, հմմտ. Reinack Th. L'histoire par les monnaies, Paris, 1902, pp. 239-248): Հնագիտական նյութերի և անտիկ սկզբնաղբյուրների հետազոտությունների հիման վրա որոշ ուսումնասիրողներ եզրակացրել են, որ Կոմագենեի մայրաքաղաք Սամոսատի հիմնադիրն էր Սամոս I-ը (մոտ մ. թ. ա. 260-243 թթ.) (Honigmann E. Kommagene - Pauly's Real encyclopädie der classischen alterumswissenschaft. Supplementband IV, Stuttgart, 1924, S. 983, տե՛ս նաև Կորապյան Գ. Страна Коммагена и Армения (ՀՄՍՈ ԳԱ Տեղեկագիր հաս. գիտ., 1956, N 3, էջ 73-74), Getzel M. Cohen, The Hellenistic Settlements in Syria, the Red Sea Basin, and North Africa, London, 2006, p. 187, Մարգարյան Ե., Հելլենիստական դարաշրջանի Օռիֆի և Կոմագենեի պատմությունից (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2009, N 1, էջ 22) և այլն):

² Ե. Ներսեյանը, հիշատակելով Վ. Լանգլուայի (Langlois V., նշվ. աշխ.), Է. Բաբելոնի (Babelon E. Catalogue des monnaies grecques de la Bibliothèque nationale: Les rois de Syrie, d'Arménie et de Commagène, Chez C. Rollin & Feuardent, Paris, 1890) և Մորգանի (Morgan J. de, Histoire du peuple Arménien. Depuis les temps les plus reculés de ses annales jusqu'à nos jours, Nancy-Paris-Strasbourg, 1919, p. 66, 67) աշխատությունները, նշել է, որ պետք չէ անտեսել Կոմագենեի թագավոր Սամոսի և Հայաստանի վաղ Երվանդունի թագավորների թագի միջև նմանության փաստը (Nercessian Y. T. The Evolution of the Armenian Tiara (Armenian Numismatic Studies, Los Angeles, 2000, p. 139)).

³ Langlois V., նշվ. աշխ., էջ 8:

Արշամաշատի և Փոքր Հայքի ազգակից արքաների հարստությունները համարում է սկզբնապես ճյուղավորված Հայկյան տոհմաճառից⁴:

Նա վկայակոչում է Պլինիոսի՝ Հայաստանում ստեղծված 120 ստրատեգիաների մասին հաղորդումը, որում մասնավորապես նշվում է, որ դրանցից «մի քանիսը նախկինում բնիկ անուններով իրական առանձին թագավորություններ էին»⁵: Իսկ թե «Որո՞նք էին այս թագավորությունները... Պատմությունը նրանց մասին ոչինչ չի ասում»⁶: Այս խնդրի կապակցությամբ Լանգլուան կարևորում է դրամագիտական նյութի աշխարհագրությունը՝ գրելով. «Բազմաթիվ շքադրամներ մեզ ծանոթացնում են որոշ թագավորների անունների, որոնք այդ ժամանակաշրջանում թագավորել են Հայաստանի որոշ գավառներում, ինչպես, օրինակ, Արշամաշատում... Կոմագենեի մայրաքաղաք Մամուսատում և Փոքր Հայքում»⁷:

Արքայից արքա Տիգրան Բ Մեծի (մ.թ.ա. 95-55 թթ.) և նրա հաջորդների մասին Վ. Լանգլուան նշել է, որ հայ միապետների տիարան խորհրդանշել է նրանց ազգությունը կամ ծագումը: Անդրադառնալով հայկական սկզբնաբյուրներին, մասնավորապես, Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկին՝ նա նշում է, որ հայ պատմիչները տիարային տալիս են ընդհանրական՝ թագ անվանումը, իսկ Հայոց արքունիքի գլխավոր գործակալություններից էր թագակապ ասպետութիւնը (թագադիր և ասպետ), որի պարտականությունն էր արքայի գլխին թագ դնելը⁸: Լանգլուան կարևորել է տիարայի «անփոփոխելի և առանձնահատուկ ձևը», որը «ծառայում է տարբերակելու Հայաստանի արքաներին Արևելքի մյուս միապետներից»⁹: Նա ուշադրություն է դարձրել Ստրաբոնի «Աշխարհագրությունում» հիշատակվող տեղեկության խտրմասին, որը հույն և լատին հեղինակներն անվանում են տիարա, կիդարիս և պիլոս (τίαρα γάρ τις και κίταρις και πῖλος)¹⁰:

⁴ Նույն տեղում, էջ XVII, XX:

⁵ Pliny Natural History, Books 3-7 with an English translation by H. Rackham, London, 1969, VI, 10.

⁶ Langlois V., նշվ. աշխ., էջ 7:

⁷ Նույն տեղում: Մեկ այլ աշխատությունում նա հիշատակել է Օռփքը (Langlois V., Collection des historiens anciens et modernes de l'Arménie, t. I, Paris, 1867, pp. 211, 222, 250, 261), որի սահմանը արևմուտքից Եփրատն էր:

⁸ Տե՛ս Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Ե., 1991, էջ 110, 117:

⁹ Langlois V., նշվ. աշխ., էջ XX. Հմմտ. Պտուկեան Զ., Օռփքի եւ Կոմագենեի հայ թագաւորութեանց դրամները, Հայ դրամագիտական Ընկերակցութիւն, Յատուկ հրատարակութիւն, թիւ 4, Լոս Անճելէս, 1985, էջ 29-30: Bedoukian Z. P. Coinage of the Artaxiads of Armenia, Royal Numismatic Society, Special publication, N 10, London, 1978, p. 24.

¹⁰ The Geography of Strabo, with an English Translation by H. L. Jones, Cambr., Mass., London, in Eight Volumes, Vol. V, 1954, XI, 13, 9.

Ըստ Է. Բաբելոնի, Ապպիանոսը, Դիոն Կասիոսը, Պլուտարքոսը և մյուս հեղինակները, որոնք պատմում են Անտիոքոս I Թեոս Դիկայոս Էպիփանի (մ.թ.ա. 70-38 թթ.) մասին, նրան չեն նշում *Antivocoi o Kommaghnovi*, այլ դրամները կրում են *BASILEWS ANTIOCOY* լեգենդը: Իսկ քանի որ, ըստ Է. Բաբելոնի, Անտիոքոս Թեոսը «Կոմմագենեում և Միջագետքում» հաջորդում է Տիգրան Մեծին, նա կրում էր նույն **տիարան**, ինչպես «Տիգրան Մեծի անմիջական հաջորդները Հայաստանում»¹¹: Այսինքն, խոսքը մ.թ.ա. 66 թ. Տիգրան Բ Մեծի և Պոմպեոսի միջև կնքված պայմանագրից հետո ընկած ժամանակաշրջանի մասին է, երբ Հայոց աշխարհակալ տերության կազմի մեջ ընգրկված տարածքներից այդ պայմանագրով անջատված երկրների թվում էր Կոմմագենեն, իսկ Մեծ Հայքի թագավորությունը շարունակաբար պահպանվեց իր բնապատմական և պետական սահմաններում:

XIX դ. ֆրանսիական դրամագիտական գրականության մեջ արդեն, փաստորեն, առկա է խնդրո առարկա ժամանակաշրջանի Մեծ Հայքի և Կոմմագենեի թագավորությունների գահակալների դինաստիական ազգակցության մասին միտքը: Հետաքրքրական է, որ մինչև 1880-ական թթ., այսինքն, նախքան Նեմրոթ լեռան՝ Անտիոքոս I Թեոսի հունարեն արձանագրության հրապարակումը, հայկական արքայատոհմի հետ կապը դիտարկվում էր կոմմագենյան արքայի **տիարայի** նմանեցմամբ կամ նույնացմամբ հայկական **տիարայի** կամ թագի հետ: Իրավիճակը փոխվեց այդ արձանագրության՝ Կ. Հումանի և Օ. Պուխտայնի հրապարակումից հետո, երբ հայ-կոմմագենյան փոխառնչությունների մասին խոսելիս, որպես փաստարկ, սկսեցին օգտագործել Անտիոքոս Թեոսի նախնի **Արոանդեսի** մասին հիշատակությունը, որին հետազոտողները տարբեր մեկնություններ են տվել:

Նեմրոթ լեռան արձանագրությունում, որպես Անտիոքոս Թեոսի նախնի է հիշատակվում Արոանդես-Երվանդը (Օրոնտես), որն ըստ Հումանի և Պուխտայնի վերծանության, Արտասուրայի որդին էր, Արտաքսերքսես II

¹¹Babelon E., նշվ. աշխ., էջ CCXIII. Հմնտ. John H. Young, *Commagenian Tiaras: Royal and Divine* (*American Journal of Archaeology*, Vol. 68, N 1, Jan., 1964, p. 31), Նեմրոթ լեռան քանդակների՝ Անտիոքոս I Կոմմագենացի թագավորի ու Միհրի պատկերների համեմատությունից Ժ. Խաչատրյանը եզրակացրել է, որ նրանք նույն տարածք ունեն, սակայն այն տարբերությամբ, որ Անտիոքոսը կրում է Արտաշեսյանների տիպի թագ, իսկ Միհրը՝ սրագագաթ (Խաչատրյան Ժ., Կավե արձանիկների պատկերագրությունը [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 2002, N 1, էջ 195]:

Մենմոնի (մ.թ.ա. 405/4-359/8 թթ.) դստեր՝ Հոռոդոունի ամուսինը¹², ինչը համապատասխանում է գրավոր սկզբնաղբյուրների տեղեկություններին¹³:

1886 թ. ֆրանսիացի հնագետ, դրամագետ Թ. Ռեյնաքը հրատարակում է Պերգամոնի մոտակայքում հայտնաբերված մեկ այլ արձանագրություն, որտեղ նույնպես հիշատակվում է Արտանդեսը¹⁴: Արձանագրությունը բավականաչափ վնասված է, բայց Արտասուրա և Արտաքսերքսես անձանունների ընթերցումով հետազոտողը եզրակացրել է, որ խոսքը Նեմրուժ լեռան Անտիոքոս Թեոսի արձանագրությունում նշվող նույն Արտանդես-Օրոնտեսի մասին է, որը եղել է Հայաստանի սատրապը, ըստ Քսենոփոնի հիշատակության¹⁵: Թ. Ռեյնաքը, անդրադարձնալով Կոմմագենեի թագավորների ծագումնաբանությանը, նշել է՝ ինչպես Կոմմագենեում, այնպես էլ հարևան Պոնտոսում և Կապադովկիայում, թագավորներն իրենց զահակալությունը օրինականացնելու համար օգտագործում էին իրանական կամ

¹² Humann C., Puchstein O. *Reisen in Nordsyrien und Kleinasien*, Berlin, 1890, S. 283. Արձանագրության՝ Արտաքսերքսես և Հոռոդոունե անունների հատվածները վնասված են: Գ. Տիրացյանը, Օրոնտեսին չհամարելով **Արնեյան Հայաստան** հասկացությունը ընդգրկող տարածքի կառավարիչ, միննույն ժամանակ նշել է, որ Հայաստանի այն մասը, որ նրա կառավարման տակ էր, արևելյան շրջանների հետ մեկտեղ ընդգրկում էր նաև հարավային և հարավարևմտյան շրջանները: Նա կարծում է, որ «Հայաստանի հարավային մասը և Կոմմագենե վարչաքաղաքական իմաստով մեկ ամբողջություն էին կազմում, որի կառավարիչն էր Օրոնտես-Արտանդես-Երվանդը, որ ճանաչվում է Կոմմագենեի Անտիոքոս թագավորի նախնին» (Тирация Г., նշվ. աշխ., էջ 72): Հեղինակը Տիրիբազոսին ընդունում է որպես Արաձանիի շրջանում սկսվող «Արևմտյան Հայաստանի» կառավարիչ, իսկ Օրոնտեսի իշխանության տակ գտնվող տարածքը տեղադրում է Տավրոսից հարավ և արևմուտք: Հետագայում, վերանայելով իր այս կարծիքը, Գ. Տիրացյանը Քսենոփոնի հիշատակած Օրոնտես-Երվանդի իշխանության տակ գտնվող տարածքի մասին գրել է. «հիմնականում ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհի հարավային և արևելյան շրջանները» (Տիրացյան Գ., Հայաստանի ներքին կյանքը Աքեմենյանների տիրապետության ժամանակաշրջանում [Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ), Ե., 1971, հ. 1, էջ 454]):

¹³Xenophon, *Anabasis*, in *Seven Volumes*, 3, London. 1922., II. 4, 8, III. 4, 13; 5, 17, հմմտ. Plutarch's *Lives*, with an English Translation by B. Perrin, in *Eleven Volumes*, London, 1962, vol. XI, rtaxerxes, XVII.4:

¹⁴Reinack Th., նշվ. աշխ., էջ 236-238: Խոսքը Կյուրոս Կրտսերի՝ Փոքր Ասիայում սատրապ եղած ժամանակաշրջանի (մ.թ.ա. 408/7-401 թթ.) վերջում տեղի ունեցած իրադարձությունների մասին է: Գ. Տիրացյանը սկզբնաղբյուր-ներում եղած տարբեր տեղեկություններից ենթադրում է. «Ինչ-ինչ պատճառներով, 4-րդ դարի սկզբին Օրոնտեսը տեղափոխվում է Փոքր Ասիա, որտեղ նա ծավալում է բուն գործունեությունը»: Այնուհետև, միահյուսելով Պերգամոնի արձանագրության, Դիոդորոս Միկիլիացու, Տրոգոս Պոմպեոսի և այլոց տեղեկությունները, նա գրում է, որ Օրոնտեսը ի վերջո «ապաստան է գտնում Հունաստանում և հաստատվում Աթենքում» (Տիրացյան Գ., Երվանդունիները Հայաստանում (ՀՄՄՌ ԳՄ Տեղեկագիր հաս. գիտ., 1958, N 6, էջ 62): Ի դեպ, Քսենոփոնը Օրոնտես-Երվանդին՝ Հայաստանի կառավարիչ լինելու մասին տեղեկության մեջ չի նշել նրա էթնիկական ծագումը, այլ միայն գրել է Արտաքսերքսես II-ի դստեր ամուսինը լինելու մասին:

¹⁵Xenophon, III. 5, 17.

Մելնիյան արքայական ընտանիքների հետ իզական գծով ամուսնական կապը¹⁶, իսկ արական գծով նրանք տեղական ծագում են ունեցել:

Նշելով մասնավորապես Ստրաբոնի հաղորդումը վերջին Երվանդի (մ.թ.ա. III դ. վերջ) Հյուդարնեսի (Հիդարնես)՝ յոթ պարսիկներից մեկի շատավիդը լինելու մասին (Strabo XI, 15)՝ որոշ հետազոտողներ Երվանդունիներին համարում են Աքեմենյաններից սերած¹⁷: Ժ. Էլչիբեկյանը գրել է, որ Հռոդոզոսի միջոցով Օրոնտեսը ազգական է դառնում միաժամանակ և՛ Աքեմենյաններին և՛ Հյուդարնյաններին: Իսկ Աքեմենյան ավանդույթների կենսունակության պայմաններում սատրապ Օրոնտեսի՝ Արտաքսերքսես Մենանի ազգականը լինելու փաստն, անշուշտ, ամեն առիթով ուռճացվել է¹⁸: Պ. Բրիանը, անդրադառնալով Հիդարնեսին գրում է. «...այնուամենայնիվ, գիտենք, որ Օրոնտեսի և քեմենյան արքայական ընտանիքի միջև կապը իրականում բխում է պարզապես Արտաքսերքսես II-ի դստեր հետ նրա ամուսնությունից, որի միջոցով նրա հետավոր հաջորդները դիտել են Դարեհին՝ Նեմրոթ լեռան [արձանագրությունում հիշատակված] իրենց նախնիների մեջ: Այս օրինակը նորից ապացուցում է, որ Յոթի ընտանիքների ավանդույթները հետագայում պարբերաբար գործածվել են արքայատոհմի օրինականացման նպատակով»¹⁹:

Խնդրո առարկա հարցում կարևոր է Գ. Սարգսյանի դիտարկումը, որ Կոմմագենե երկիրը դարեր շարունակ ղեկավարվել է հայկական

¹⁶Reinack Th., նշվ. աշխ., էջ 238-239:

<https://archive.org/stream/lhistoireparles00reingooog#page/n263/mode/1up>

¹⁷Մանանդյան Հ., Երկեր, հ. Ա, Ե., 1977, էջ 130: Тирация Г. Армянская тиара: опыт культурно-исторической интерпретации (Вестник древней истории, 1982, N 2, с. 91); Կրկյաշարյան Ա., Երվանդունի արքայատոհմը Հայաստանում (ՊԲՀ, 1973, N 4, էջ 184-185):

¹⁸Տե՛ս Էլչիբեկյան ժ., Երվանդունիների ծագման հարցի շուրջ (ՊԲՀ, 1971, N 2, էջ 112-113):

¹⁹Briant P. L'histoire de l'empire perse de Cyrus à Alexandre, Paris, 1996, p. 149. Ա. Քոսյանը, անդրադառնալով Հիդարնեսի (սա հին պարսկերեն Վիդարնա անվան հունականացված ձևն է) Օրոնտեսի նախնին լինելու փաստին, նշել է. «մասնագետների լրությունը, թերևս, հետևանք է այն մտայնության, որ այդ տեղեկությունը կարող էր լինել մտացածին կամ, համենայն դեպս, անապացուցելի է այլ, լրացուցիչ աղբյուրների բացակայության պատճառով: Ամեն դեպքում, եթե ընդունենք, որ սույն Հիդարնեսը իրոք Օրոնտեսի նախնին էր, ինչը, հաշվի առնելով Ստրաբոնի հեղինակությունը, դժվար է կասկածի տակ առնել, և նրա հետնորդները հանդիսանում էին Հայաստանի կառավարիչները (սատրապների կարգավիճակով), ապա, թերևս, առավել ընդունելի բացատրությունն այն է, որ Հիդարնեսի տոհմը այդ իրավունքը կարող էր ստանալ Դարեհ I-ի կողմից, որպես պարզև իր հանդեպ նրա մատուցած ծառայությունների դիմաց»: Ավելին, հետազոտողը նշել է, որ մ.թ.ա. XIV դ. երկրորդ կեսին խեթական արքա Մուպիլուլիումաս I-ը (մ.թ.ա. 1350-1322 թթ.) Իսուվա-Օնիփի տարածքում հիշատակել է Ուիտառնա անունով մի կառավարչի [Քոսյան Ա., Հայոց վաղ պետականության պատմության մի խնդրի շուրջ (Բանբեր Հայագիտության, 2014, N 1, էջ 7)]:

Երվանդյան դինաստիայի ճյուղերից մեկի կողմից, ուստի «նրա էթնոսի հարցը, միայն թյուրիմացորեն և նյութից ստացած ամենամակերեսային տպավորության տակ կարելի է համարել իրանական...»: Ելնելով դիցարանի, անվանումների և պետականության հատկանիշների ընդհանրություններից՝ Գ. Սարգսյանը գրել է. «Մինչդեռ որոշակի հիմքեր կան, բացի իշխող դինաստիայից, նրա բնակչության մի սովոր մասը ևս, եթե ոչ մեծամասնությունը, հայկական համարելու»²⁰:

Մովսես Խորենացին, մ.թ.ա. VII դ. երկրորդ կեսին տեղի ունեցած իրադարձությունների հետ կապված հաղորդելով Հայկազուն Պարույր Սկայորդու մասին, մ.թ.ա. VI դ. նրան հաջորդած գահակալների շարքում նշել է Երվանդ Սակավակյացին, որի որդին էր Տիգրանը՝ մարաց Ածառակ թագավորի և նրա թոռան Կյուրոսի՝ Աքեմենյան տերության (մ.թ.ա. 550-330 թթ.) հիմնադրի ժամանակակիցը²¹: Չնոռանանք նաև Թովմա Արծրունու հիշատակած Տոսպ (Վանի) գավառի Երուանդական անվանումը²²: Ուշադրություն դարձնենք նաև այն փաստին, որ Մեծ Հայքի թագավոր Արտաշես Ա-ն իր թողած որոշ սահմանաքարերի արամեերեն արձանագրություններում իրեն Երվանդական է համարում²³:

Հետազոտողները, ելնելով համապատասխան դրամների պատկերագրությունից, ուշադրություն են դարձրել հայկական թագի հնության²⁴ և

²⁰Սարգսյան Գ., Անտիոքոս Գ Սելևկյանը և հայկական պետությունները (Բանբեր Երևանի համալսարանի, 1969, N 1, էջ 55): Ըստ Ե. Մարգարյանի, Կոմմագենեի թագավորությունում «ծագման օրվանից մինչև կործանումը (միայն փոքր ընդհատումներով), իշխել է հայոց Երվանդականների արքայատոհմի ճյուղերից մեկը» (Մարգարյան Ե., Միհրականությունը հին աշխարհի քաղաքական և կրոնա-հոգևոր համակարգում. Կոմմագենե, Հայաստան, Հոռո, Ե., 2014, էջ 5, 33):

²¹Մովսես Խորենացի, էջ 67-69:

²²Թովմա Արծրունին տեղեկություններ է հայտնում Երվանդ թագավորի մասին, որն ըստ ավանդության, «գայ բանակի առ ստորոտով լերին և զլուխ Տոսպ գաւառի և կոչէ զտեղին Երուանդականս» (Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, ՍՊԲ, 1887, էջ 50): Մատենադարանի հայերեն երկու ձեռագրերի հիշատակարաններում (XVIII դ.) Վան քաղաքը անվանված է «Երուանդաւան» [տե՛ս Տիրացյան Գ., Երվանդունիների հայկական պետությունը (ՀԺՊ, հ. I, էջ 437-440)]: Համաձայն Ս. Երեմյանի, Երվանդունիք անունն այս գավառը ստացել է հնագույն հարստության «Արուանդունիներից» (Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, էջ 51):

²³Մանրամասն տե՛ս Սարգսյան Գ., Հայաստանի միավորումը և հզորացումը Արտաշես Ա-ի օրոք (ՀԺՊ, հ. I, էջ 528-529):

²⁴Ղ. Ալիշանը, նշելով, որ Քսենոփոնը Տիգրան Ա-ի (իմա՛ Տիգրան Երվանդյան) առնչությամբ հիշատակել է հայկական խույրը (κύριος) (Xenophon, Cyropaedia, with an English Translation by W. Miller, in Two Volumes, I, London, 1960, III, 1, 13), գրել է. «...սս թագն էր նախնի Հայկազանց...» [Ալիշան Ղ., Դրամը Բ Տիգրանայ և թագ հայկական (Բազմավեպ, Վենետիկ, 1848, հ. VI, էջ 279)]: Ե. Ներսիսյանը խույրի պատկերագրական և խորհրդանշային նշանակության մասին գրել է, որ հայկական խույրի նախնական ձևն առաջացել է հայկական ժողովրդական տարազից:

առանձնահատկության վրա²⁵: Ելնելով տիարայի մասին եղած հնագույն տեղեկություններից՝ Հ. Հակոբյանը եզրակացրել է. «Հայկական տիարան կամ խույրը անտիկ դարաշրջանի քանդակներում, բարձրաքանդակներում, փորագիր քարերի(գեմա) և դրամների վրա պատկերված թագն է, որը կրում էին Տիգրան Մեծն ու հաջորդ մի քանի Արտաշիսյան արքաներն ու ազգակից կոմմազենյան ճյուղի Երվանդունի թագավորները հանդիսավոր պայմաններում»²⁶:

Ինչ վերաբերում է պաշտամունքային բովանդակությամբ թագերին, ապա Վարդան Հացունին, ուսումնասիրելով XIX դ. ֆրանսիացի հետազոտող Փ. Լայարդի աշխատությունում ներկայացված Միհրի պաշտամունքին վերաբերող թագերի մի մեծ խումբ, եզրակացրել է, որ դրանցից շատերը նմանություն ունեն Տիգրան Մեծի թագին, իսկ քանի որ Հայաստանում Միհրի պաշտամունքը և տաճարը գոյություն են ունեցել վաղնջական ժամանակներից մինչև IV դ. սկիզբը, ուստի հայ թագավորները կամ նրանց եղբայրները միաժամանակ քրմապետեր էին²⁷. այսպես, օրինակ, Մովսես Խորենացին գրում է, որ Երվանդ արքան Բագարանում «մեհեանս շինեալ՝ զեղբայր իւր զԵրուազ քրմապետ կացուցանէր»²⁸: Հացունու կարծիքով, Տիգրան II-ի թագը «կրոնական գաղափարով էր ստեղծված ու հետևողությամբ էր Միհր աստուծոյն դրածին, և ոչ որևէ ժամանակակից արքայական օտար խույրի»²⁹: Անշուշտ, ուշագրավ է Վ. Հացունու դիտարկումը **հայկական թագի** և Միհրի խույրի տեղական ծագման մասին: Ս. Դևեջյանը Լոռի բերդաքաղաքի պեղումների ժամանակ բրոնզեդարյան խեցեղենի մեջ հայտնաբերեց սև, փայլեցրած մակերեսով խեցու բեկոր, որի վրա

Աստիճանաբար զարգանալով դարձել է կատարելագործված թագ, որը ճանաչվել և անվերապահորեն ընդունվել է որպես հայկական տիարա թագ (Nercessian Y., նշվ. աշխ., էջ 145):

²⁵ Անդրադատնալով Տիգրան Մեծի դրամների նկարագրին՝ Խաչատուր Մուշեղյանը նշել է, որ դրամների վրա հաճախ կիսանդրու չափով պատկերված արքան գլխին այնպիսի թագ էր կրում, «որի նմանը չկար ժամանակակից և ոչ մի վեհապետի մոտ, ոչ Արևելքում և ոչ էլ Արևմուտքում, բացառյալ Տիգրանին ենթակա Կոմմազենների արքայի թագը [Մուշեղյան Խ., Դրամական շրջանառությունը հին Հայաստանում: Հայկական դրամներ (ՀԺՊ, հ. I, էջ 694)]:

²⁶ **Հակոբյան Հ.**, Տիգրան Մեծ, Ե., 2005, էջ 214: Ինչպես դիտարկել է Խ. Մուշեղյանը, Տիգրան Մեծի թագը վերևում ավարտվում է ճառագայթաձև ելուստներով, իսկ ներքևում՝ երկար, մինչև ուսերն հասնող ականջակալներով և վզակալով, ըստ որում, ճակատային մասում թագի վրայից կապված է արքայական ժապավենը, և կենտրոնը զարդարված է արևի պաշտամունքի խորհրդանիշներով աստղ՝ երկու արծիվների միջև (Մուշեղյան Խ.Ա., նշվ. աշխ., էջ 694):

²⁷ **Վարդան վ. Հացունի**, Պատմություն հին հայ տարագին, պատկերագրող, Վենետիկ-Ս. Ղազար, 1923, էջ 69:

²⁸ **Մովսես Խորենացի**, էջ 166:

²⁹ **Հ. Վարդան վ. Հացունի**, նշվ. աշխ., էջ 69:

փորագրված էր մարդու գլուխ՝ վեց սրածայր ատամներ ունեցող թագով: Հայաստանում գտնվել են նաև արձանաքանդակներ Դվինի հնա-վայրից, որոնք, ըստ Կ. Ղաֆադարյանի, նման են հայ թագավորների պատկերներին³⁰: Ս. Դեռջյանը, համադրելով Հայաստանի տարբեր հնավայրերում և տարբեր ժամանակաշրջաններով թվագրվող նմանատիպ ատամնավոր թագերի պատկերաքանդակները, եզրակացրել է որ Հայաստանում «դրանք դուրս չեն եկել գործածությունից, այլ փոխանցվել են ավանդաբար»³¹:

Այսպիսով, ինչպես վկայում է դրամագիտության, հնագիտության և պատմագիտության ասպարեզներում **հայկական թագին** նվիրված ուսումնասիրությունների անցած ուղին, Կոմագենի դրամներում պատկերված **տիարայի՝ հայկական ծագման լինելու խնդիրն արծարծող՝ XIX դ. ֆրանսիացի դրամագետների հետազոտությունները կարևոր նշանակություն ունեն հայ դրամագիտության պատմության մեջ:**

**ВОПРОС ИНТЕРПРЕТАЦИИ АРМЯНСКОЙ ТИАРЫ НА КОММАГЕНСКИХ МОНЕТАХ
ВО ФРАНЦУЗСКОЙ ИСТОРИОГРАФИИ**

ДУМИКЯН А. В.

Резюме

Вопрос *Армянской тиары* или короны был, в частности, исследован французским арменологом Виктором Ланглуа (1829-1869) и нумизматом и археологом Эрнестом Бабеллоном (1854-1924). Согласно В. Ланглуа, цари Коммагены носили армянскую тиару. В. Ланглуа

³⁰ Ղաֆադարյան Կ., Դվին քաղաքը և նրա պեղումները, Ե., 1952, էջ 251-254, նույնի՝ Հեթանոսական շրջանի դամբարանները Դվինում (ՊԲՀ, 1974, N 4, էջ 35): Բ. Առաքելյանը այս քանդակները թվագրել է մ.թ.ա. I դ. կամ հին ու նոր թվականությունների սահմանագծից ոչ ուշ և հիմնվելով նախնիների պաշտամունքի վերաբերյալ Մովսես Խորենացու տեղեկության վրա՝ նշել է. «Վերոհիշյալ քանդակները, հիրավի, պատկերում են Հայոց թագավորների նախնիներին, որոնց կուռքերը դրվում էին հին Հայաստանի հեթանոսական տաճարներում ու երկրպագվում աստվածների արձաններին հավասար» (Առաքելյան Բ., Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության (մ.թ.ա. VI դ.-մ.թ. III դ.), Ե., 1976, էջ 17): Համաձայն Ս. Դեռջյանի, քարե արձանիկների թվագրումը պետք է որ ավելի վաղ լինի, քանի որ դրանց ատամնավոր թագերը զարմանալիորեն ձևավորված են ճիշտ այնպես, ինչպես մի խեթական անագե արձանիկինը (Դեռջյան Ս., Թագակիր իշխանավորի պատկերը Լոռի բերդի բրոնզեդարյան բնակավայրից (ՀՆՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1986, N 8, էջ 78, 79):

³¹ Դեռջյան Ս., նշվ. աշխ., էջ 79:

также отмечал, что цари Самосаты, Аршамашата и Малой Армении имели хайканское происхождение. Он считал, что взошедшие на престол после Самоса II цари Коммагены были селевкидского происхождения (по женской линии). В. Ланглуа указывает, что они переняли *тиару* от царей Армении по чисто политическим причинам. Что же касается царя царей Тиграна II Великого (95-55 гг до н.э.) и его преемников, то В. Ланглуа отмечает, что *тиара* армянских царей символизировала их армянскую национальность либо происхождение.

Э. Бабелон также полагает, что царь Коммагены Антиох I носил такую же тиару, какую носили преемники Тиграна II в Армении.

В 19 веке во французской нумизматической литературе уже была принята идея родства царей Великой Армении и Коммагены. Исследования французских нумизматов, посвященные вопросу армянского происхождения *тиары*, явились значительным вкладом в историю армянской нумизматики.

THE QUESTION OF INTERPRETATIONS OF THE *ARMENIAN TIARA* ON COMMAGENE COINS IN FRENCH HISTORIOGRAPHY

A. DUMIKYAN

Abstract

Since the 19th century the question of the Armenian *tiara* or crown was particularly researched by the French Armenologist Victor Langlois (1829–1869) and numismatist and archaeologist Ernest Babelon (1854–1924). According to V. Langlois, Commagene's kings wore the Armenian *tiara*. Langlois considered the kings of Samosat, Arshamashat and Armenia Minor of the Haykian origin, then noted that the kings of Commagene after Samos II were of the Seleucid descent through their female line and they adopted the *tiara* from the kings of Armenia because of purely political reasons.

In relation to the King of Kings Tigranes II the Great (95-55 B.C.) and his successors, V. Langlois noted that the Armenian kings' *tiara* symbolized their Armenian nationality or origin.

E. Babelon also suggested that the king of Commagene, Antiochus I wore the same *tiara* as the successors of Tigran II in Armenia.

In the 19th century in the French numismatic literature the idea of kinship of the sovereigns of the kingdoms of Great Armenia and Commagene had already been available. The researches of the French numismats on the *Armenian tiara* contributed considerably to the history of the Armenian numismatics.